Օտարերկրյա աշխատողներ և սոցիալական ապահովության համարներ

Բովանդակություն

Ի՞նչ ես պետք է անեմ Միացյալ Նահանգներում աշխատելու համար՝	2
Ինչպե՞ս եմ ես դիմելու Սոցիալական Ապահովության համարի և քարտի համար՝	2
Որքա՞ն ժամանակ կպահանջվի Սոցիալական Ապահովության համար ստանալու համար՝	3
Արդյո՞ք ինձ անհրաժեշտ է ունենալ իմ համարը նախքան իմ աշխատանքի սկսելը՝	3
Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ	3

Սոցիալական Ապահովության համարները օգտագործվում են անձի աշխատավարձերը կառավարությանը հայտարարագրելու և Սոցիալական Ապահովության նպաստներ ստանալու իրավասությունը սահմանելու համար: Ձեզ անհրաժեշտ է Սոցիալական Ապահովության համար՝ աշխատանք գտնելու, Սոցիալական Ապահովության նպաստներ ստանալու, և կառավարության կողմից որոշ այլ ծառայություններ ստանալու նպատակով:

Եթե Դուք ժամանակավորապես գտնվում եք Միացյալ Նահանգներում աշխատելու նպատակով, ապա Ձեր գործատուն կհարցնի Ձեր Սոցիալական Ապահովության համարը: Ընդհանրապես, միայն Ներքին Անվտանգության Նախարարության (Department of Homeland Security, DHS) կողմից Միացյալ Նահանգներում աշխատելու համար լիազորված ոչ քաղաքացիները կարող են ստանալ Սոցիալական Ապահովության համար:

Այնուամենայնիվ, շատ ուրիշ գործնեություններ (բիզնեսներ), ինչպես օրինակ բանկերը և վարկային ընկերությունները, նույնպես հարցնում են Ձեր համարը, սակայն Դուք պարտադրված չեք տրամադրելու այն: Դուք կարող եք շատ ծառայություններ ստանալ առանց Սոցիալական Ապահովության համարի, այդ թվում և վարորդական իրավունքը:

SocialSecurity.gov

(շրջել)

Ի՞նչ ես պետք է անեմ Միացյալ Նահանգներում աշխատելու համար՝

Առաջին հերթին, Դուք պետք է ունենաք փաստաթղթեր, որոնք ցույց կտան Ձեր ԱՄՆ ներգաղթողի կարգավիճակը և Միացյալ Նահանգներում աշխատելու թույլտվությունը: Այնուհետև, Դուք պետք է դիմեք Սոցիալական Ապահովության Վարչությունից Սոցիալական Ապահովության համար և քարտ ստանալու համար:

Ինչպե՞ս եմ ես դիմելու Սոցիալական Ապահովության համարի և քարտի համար՝

Սոցիալական Ապահովության համարի և քարտի համար դիմելը անվճար է: Ձեր Սոցիալական Ապահովության տեղամասային գրասենյակում Սոցիալական Ապահովության համարի համար դիմելիս՝

- Լրացրե՛ք Սոցիալական Ապահովության քարտի դիմումի ձևը (*Complete an application for a Social Security card*); և
- Ցույց տվե՛ք մեզ բնօրինակ փաստաթղթերը, որոնք կհավաստեն Ձեր՝
  - — Ինքնությունը;
  - — Աշխատանքի թույլտվությամբ ներգաղթողի կարգավիճակը; և
  - — Տարիքը:
- Ներկայացրե՛ք Ձեր լրացված դիմումի ձևը և բնօրինակ փաստաթղթերը Ձեր Սոցիալական Ապահովության տեղամասային գրասենյակ:

Բոլոր փաստաթղթերը պետք է լինեն կամ բնօրինակ կամ դրանք թողարկող գործակալության կողմից հավաստված կրկնօրինակներ: Մենք չենք կարող ընդունել փաստաթղթերի լուսապատճեներ կամ նոտարով հաստատված կրկնօրինակներ: Մենք նույնպես չենք կարող ընդունել ստացական, որը ցույց է տալիս, որ Դուք դիմել եք որևէ փաստաթղթի համար:

Մենք կարող ենք մեկ փաստաթուղթը օգտագործել երկու նպատակով: Օրինակ, մենք կարող ենք Ձեր DHS աշխատանքային թույլտվությունը օգտագործել, որպես Ձեր ինքնության և աշխատանքի թույլտվությամբ ներգաղթողի կարգավիճակի հավաստիք: Ձեր ծննդյան վկայականը կամ անձնագիրը կարող է ծառայել որպես Ձեր տարիքի հավաստիք: ***Դուք պետք է տրամադրե՛ք առնվազն երկու առանձին փաստաթուղթ:***

Ինքնություն և աշխատանքի թույլտվությամբ ներգաղթողի կարգավիճակ՝

Ձեր ինքնությունը և աշխատանքի թույլտվությամբ ներգաղթողի կարգավիճակը հավաստելու նպատակով՝ ցույց տվեք մեզ Ձեր ներկայիս ԱՄՆ ներգաղթման փաստաթղթերը և Ձեր ժամկետը չլրացած արտասահմանյան անձնագիրը: Ընդունելի ներգաղթման փաստաթղթերը ներառում են Ձեր՝

- Ժամկետը չլրացած արտասահմանյան անձնագիրը՝ ընթացիկ թույլտվության կնիքով, որը ցույց է տալիս աշխատանքի թույլտվության կարգը;
- Ձև I-551, *Permanent Resident Card* (Մշտական Բնակության Քարտ);
- Ձև I-94, *Arrival/Departure Record* (Ժամանման/Մեկնման Գրանցումը), որը ցույց է տալիս DHS կողմից աշխատանքի թույլտվությունը; կամ
- Ձև I-766, *Employment Authorization Document*, (Աշխատանքի Ընդունվելու Լիազորության Փաստաթուղթ, EAD, DHS-ի կողմից տրված աշխատանքի թույլտվություն):

Այցելուների փոխանակում՝ J-1 այցելուն պետք է մեզ նույնպես ցույց տա DS-2019, Իրավասության Վկայագիր Փոխանակման Այցելուի Կարգավիճակի համար (*Certificate of Eligibility for Exchange Visitor Status*): Ի լրումն, J-1 ուսանողները, ուսանող ինտեռները, և միջազգային այցելուները պետք է ցույց տան հովանավորի նամակը՝ զբաղվածությունը հավաստելու նպատակով: Նամակը պետք է

(շրջել)

գրված լինի հովանավորի ֆիրմային բլանկի վրա՝ բնօրինակ ստորագրությամբ, ինչը լիազորում է Ձեր զբաղվածությունը:

Միաջազգային ուսանողներ՝ F-1 կամ M-1 ուսանողը նույնպես պետք է մեզ ցույց տա Ձև I-20, Իրավասության Վկայագիր Ոչ ներգաղթած Ուսանողի Կարգավիճակի համար (*Certificate of Eligibility for Nonimmigrant Student Status*): Հնարավոր է պահանջվեն աշխատանքի իրավասությունը հավաստող լրացուցիչ փաստաթղթեր: Լրացուցիչ տեղեկատվության համար խնդրե՛ք *Միջազգային Ուսանողներ և Սոցիալական Ապահովության Համարներ* (Հրատարակություն թիվ 05-10181-AM):

Տարիք՝

Դուք պետք է ներկայացնեք Ձեր արտասահմանյան ծննդյան վկայականը, եթե ունեք այն Ձեր ձեռքի տակ, կամ կարող եք ստանալ այն 10 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ոչ, ապա, որպես Ձեր տարիքի հավաստիք, մենք կարող ենք դիտարկել այլ փաստաթղթեր, ինչպես օրինակ Ձեր անձնագիրը կամ DHS-ի կողմից թողարկված փաստաթուղթը:

Որքա՞ն ժամանակ կպահանջվի Սոցիալական Ապահովության համար ստանալու համար՝

Մենք պետք է ստուգենք Ձեր փաստաթղթերը DHS-ի հետ, նախքան Ձեզ Սոցիալական Ապահովության համարի սմրագրումը: DHS-ի կողմից հաստատում ստանալուց հետո, մենք Ձեզ փոստով կառաքենք Ձեր Սոցիալական Ապահովության քարտը: Դեպքերի մեծամասնությունում, մենք կարող ենք արագ առցանց ստուգել Ձեր փաստաթղթերը DHS-ի հետ: Եթե հնարավոր չլինի առցանց ճշգրտել Ձեր փաստաթղթերը, ապա հնարավոր է DHS –ին մի քանի շաբաթ պահանջվի մեր հարցմանը պատասխանելու համար: Մենք սերտորեն համագործակցում ենք DHS-ի հետ, այդ ուշացումները նվազեցնելու համար:

Արդյո՞ք ինձ անհրաժեշտ է ունենալ իմ համարը նախքան իմ աշխատանքի սկսելը՝

Մենք չենք պահանջում, որպեսզի Դուք Սոցիալական Ապահովության համար ունենաք նախքան Ձեր աշխատանքը սկսելը: Այնուամենայնիվ, Ներքին Եկամուտների (Հարկային) Վարչությունը պահանջում է, որպեսզի գործատուները օգտագործեն Ձեր Սոցիալական Ապահովության համարը՝ Ձեր աշխատավարձը հայտարարագրելու նպատակով:

Մինչդեռ Դուք սպասում եք Ձեր Սոցիալական Ապահովության համարին, Ձեր գործատուն կարող է օգտվել մեր կողմից ուղարկված նամակից, որտեղ հաստատվում է, որ Դուք դիմել եք համարի համար, և Ձեր ներգաղթական փաստաթղթերը կարող են հավաստել, որ Դուք ունեք Միացյալ Նահանգներում աշխատելու թույլտվություն:

Գործատուները կարող են լրացուցիչ տեղեկատվություն գտնել առցանց՝ ***www.socialsecurity.gov/employer/hiring.htm*** կայքում:

Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

(շրջել)

Այեցելե՛ք մեր կայքէջը՝

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնեություն վարելու ամենահարմար եղանակը դա մեր՝ ***www.socialsecurity.gov*** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք՝

- Ստեղծել *my* Social Security account (իմ Սոցիալական Ապահովություն անձնական էջը)՝ Ձեր *Social Security Statement* (*Սոցիալական Ապահովության հաշվետվությունը*) դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու, Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;
- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

Նշված ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելե՛ք մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը) ՝ Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնեությունը: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են անկախ նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (Ինտերնետի) հասանելիություն, ապա հեռախոսի միջոցով մենք շատ ավտոմատացված ծառայություններ ենք առաջարկում՝ օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Զանգահարեք մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով կամ մեր TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778** հեռախոսահամարով՝ լսողության հետ խնդիրներ ունենալու դեպքում:

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ ժամը առավոտյան 07:00-ից մինչև երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր համբերատարությունը ծանրաբեռնված շրջաններում, քանի որ Դուք կարող եք ունենալ սովորականից ավելի հաճախ ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան և ավելի երկար սպասելաժամանակ մեզ հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք սպասարկել Ձեզ:

Social Security Administration
Publication No. 05-10107-AM | July 2017
Օտարերկրյա աշխատողներ և սոցիալական ապահովության համարներ
Foreign Workers And Social Security Numbers (Armenian)
Produced and published at U.S. taxpayer expense
Կազմված և հրատարակված է ԱՄՆ հարկ վճարողների հաշվին: